

կաղմից անքան հասուն չեն, դեռ պատրաստ չեն ընդունել—» նրանք ասում էին եթէ հնարաւոր եղածին չափ չի կարելի, ուրեմն բաւականացիր նրանով որ «գոնէ էլի մի բան» կանես, ախր «գոնէ մի բան» էլ բան է: Զիջումները լինում են զիջումների լեռնից: Իդէալները իրազործնելու համար նա սկսում է «կարմարել ստորութեան, կեզտոտութեան հետ» և ալդպէս զործել: Բանը վերջանում է ի հարկէ բարոյական կատարեալ անանկութեամբ: Նոյն իսկ երբ իդէալների վերջին փշրանքն է մնում, նա ալս դէպքումն էլ արժանանում է մէկի թուքին, որը ստորութեան հետ լարմարելով, անկիւնից է թքում:

Գրեածքի միտքն է ցոյց տալ թէ ուր է տանում իդէալների աստիճանաբար զիջելը, թէ ինչ սարսափելի ընդդիմադրութիւն է ցոյց տալիս ալդ երկրի հասարակութիւնը մի անպիսի զործի չի, որը շատ սահմանափակ պահանջներով և որ գլխաւորն է՝ սուրբան հնարաւոր է՝ պրինցիպով է մտնում կեանքը: Այն չափազանցրած ու սև գոյներով ներկած պատկերը անքան էլ հեռու չէ օրիգինալից:

«Զատկի գիշերում» հեղինակը պատմում է մի աւանդութիւն, թէ ինչպէս ալդ գիշերը աշխարհ է դալիս Քրիստոս: Որհնելով բնութիւնը, նա դիմում է մարդկանց, «Ամենից առաջ գէշ և լին արտասուղ, աշխատանքի լծի տակ կորացած, կարիքներով ծանրաբեռնաւ մարդիկ»: Քրիստոս օրհնում է նրանց, խոստանում է մօտալուտ փրկութիւն և վախճան կրած տանջանքներին, Յետոյ նա դիմեց վաշխաւորներին, խոտասիրտ իշխանաւորներին, աւաղակներին, կեղծաւորներին, կեղծ բարեպաշտներին և անարդար դատաւորներին: Կանդիմանեց նրանց չարութիւնը, բայց և նրանց նա խոստացաւ փրկութիւն, եթէ փոխեն իրանց կեանքի ընթացքը: Միակը որին չկարողացաւ ներել նորա բարի սիրտը, գա Յուդան էր, մատնելը:

Ահա երեք գրեածքի բովանդակութիւնը, երեքն էլ կարդացւում են հետաքրքրութեամբ: Ինչ վերաբերում է թարմանական լեզւին, լեզուն բաւականի լաւ է, չը նախելով այն դժարութիւններին, որ ներկայացնում է Շչեդրինի թարգմանութիւնը:

B.

ՕՍՏՐՈԳՈՐՍԿԻ, Վիկտոր.—«Օրլէանի կոյսը» (ըստ Շիլլերի) թարգմ. Յ. Խ.—Հրատարակութիւն Թիֆլիսի ընկ. հայ. գրք. հրատ. տպ. Շաբաձէի. 1891 թ., 98 եր. գինն է 25 կոպ.:

Աւելորդ ենք համարում բերել վերցրած է Շիլլերի նոյնանուն գրքի բովանդակութիւնը. գրքի նիւթը ւածքից և շատ տեղ նոյն իսկ Շիլ-

լերի խօսքերով է պատմած. տեղ տեղ ուրիշ է նախիդասաւորութիւնը, որը լարմարեցրած է պատմողական գրածքների համար: Հարց կարող է լինել, թէ ինչ հարկ կար տալ Շիւլլերի «Որլէանի Կոյս»-ի պատմութիւնը, քանի որ ունենք բնագրի թարգմանութիւնը: Մեզ թւում է, որ այս գիրքը անկարող լինելով փոխարինել բնագրի թարգմանութիւնը, աւելումնաւոր ունի իւր նշանակութիւնը: Բնագրի թարգմանութեան դրամատիքական ձևը, ոտանաւորով

գրւած լինելը, թանկ գինը կարող են արգելել նորա տարածման որոշ խաւերում, ուր աղաս կարող է մուտք գործել վ. Ոստրոգորսկու պատմածքը:

Գիրքը կտրղացւում է հետաքրութեամբ. մի պակասութիւն, որ լատուկ է թէ իսկական «Որլէանի Կոյս» ին և թէ այս պատմածքին, զա ալն է, որ հերոսահուն սրւած է գերբնական բնաւորութիւն:

B.

ԿՈՒՆԻԿՈՎԱ. — «Շնիկ. Ս. Պետերբուրգի Ֆրեօբելեան Ընկերութեան հրատարակութիւն. թարգմ. օր. Աննա Սահակեանց, հրատ. Թիֆլ. Ընկ. հայ. գրք. հրատարակութեան № 40, տպ. «Արսր», 28 եր. զինն է 5 կոպէկ:

Մենք ունենք բաւականի մանկական գրքեր, բայց շատ քիչ ալն պիտիներից, որ լարմար լինեն 8—10 տարեկան մանուկների համար: Այս վերջին տեսակիցն է Կունիկովի «Շնիկը», որը արժանապա է Պետերբ. Ֆրեօբելեան ընկ. մրցանակին:

Հայերէնը ճիշդ թարգմանութիւն է ռուսերէնից, փոփոխւած են միայն անունները: Գրքովի բովանդակութիւնը հետեւեալն է. ամառանոցում ապրում է Սկանդարեանը իւր ընտանիքով. Սկանդարեանը ունի մի փոքրիկ տղա, Լեոն անունով. Լեոնը ամբողջ օրը վազվզում է, խաղում է, ձուկ է որսում, նա ունի նետ ու աղեղ և ուրիշ խաղալիքներ. բայց նա չի բաւականանում այդ բոլորով:

Մի օր նա տեսնում է իրանց լապտարի աղջկա, փոքրիկ Անթառամի ձևին մի փոքրիկ չուն. չնկը դուք է գալիս Լեոնին. Լեոնը պահանջում է. Անթառամը չի համաձայնում. Լեոնը իւր դպնակի միջոցով առնում է Անթառամի մօրից չնիկը և փոխարէնը տալիս 20 կոպէկ: Միւս օրը Լեոնի հայրը պատահում է Անթառամին իրանց տան մօտ, երբ նա եկել էր տեսնելու չնիկին, խմանում է Անթառամի վիշտը, գալիս է տուն, վերցնում է Լեոնի նետ ու աղեղը, փողով լի արկղիկը և դորա փոխարէն տալիս է նրան մի 20 կ. դրամ և պատրաստում է ալգ բոլորը ընծալիլ իրանց բարեկամի երեխաներին: